ԿԱՐԾԻՔ

ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ «ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԼՈԳԻՍՏԻԿ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման արդի պայմաններում ՀՀ տնտեսության առջև ի հայտ են գալիս նորանոր մարտահրավերներ և վերջիններիս հաղթահարման բազմապիսի տարբերակներ: Այս տեսանկյունից հիմնական խնդիրը, որն արդիական է և՛ ազգային տնտեսության, և՛ նրա առանձին տարածքային սուբյեկտների մակարդակով, դա արտաքին առևտրի խթանումն է: Ներկայիս տնտեսակարգում յուրաքանչյուր երկիր անխուսափելիորեն կապակցված է համաշխարհային տնտեսությանը, ուստի աշխարհում տեղի ունեցող յուրաքանչյուր գլոբալ ցնցում այս կամ այն չափով ազդում է բոլոր երկրների վրա: Այսպիսով գլոբալացման շարունակական խորացման պայմաններում լոգիստիկայի դերը ոչ միայն էապես կարևորվում է, այլև խիստ բարձրացել է, ինչպես առանձին վերցրած երկրների ներքին, այնպես էլ արտաքին շուկայական գործընթացներում: Այսպիսով առանցքային է դառնում արտաքին առևտրի դերն ու նշանակությունը. տնտեսությունում արտադրվում և արտահանվում են համեմատական կամ մրցակցային առավելություն ունեցող ապրանքներ և ներմուծվում են այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը տեղում արդյունավետ չէ, այսինքն՝ տեղի է ունենում արտադրական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխում, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է արտադրության ծավալի ավելացման, այսինքն՝ տնտեսական աճի: Արտահանման խթանման, մրցունակության բարձրացման, նորանոր շուկաներ ներթափանցման պետական քաղաքականության նպատակը անընդհատ արդիականացող գլոբալ մարտահրավերների ներքո տնտեսական զարգացման նոր հնարավորություններ որոնելն է: Վերջինս կարելի է դիտարկել նաև որպես պետական կարգավորման կարևորագույն ուղենիշ, ինչը մեծապես պայմանավորված է համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող ինտեգրացիոն

գործընթացներով, շուկաների ազատականացմամբ, գիտատեխնիկական զարգացման արագ տեմպերով:

Լոգիստիկայի կարևորությունը միջազգային առևտրում պայմանավորված է նրանով, որ վերջինիս ճիշտ կազմակերպումից և կառավարումից կախված է ազգային կազմակերպությունների մրցունակության բարձրացումը, շահութաբերության մակարդակը, մատակարարման շղթայի յուրաքանչյուր օղակում ծախսերի և ապրանքի ինքնարժեքի նվազեցման, ապրանքաշարժի արդյունավետ կառավարման և ռեսուրսների օպտիմալացման խնդիրները: Այս իմաստով, անշուշտ արտաքին առևտրի խթանման համար անհրաժեշտ է մրցունակության և լոգիստիկ համակարգի «վերաիմաստավորում», ինչպես նաև տեսական դրույթների համապարփակ վերլուծություն և ուսումնասիրություն: Ընդհանուր առմամբ, լոգիստիկան ծառայում է որպես միջազգային առևտրի ծավալների ընդլայնման, միջազգային մրցունակության և տնտեսական զարգացման կարևորագույն խթան: Դեպի ծով ելք չունենալը, համաշխարհային շուկաներից մեծ հեռավորությունը, տրանսպորտային կոմունիկացիաների ոչ բարենպաստ վիճակը, աշխարհաքաղաքական առկա մարտահրավերները և սահմանների փակ լինելը զգալիորեն նվազեցնում են արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հնարավորությունները: Հայաստանի միջազգային մրցունակության վրա ազդում են ոչ միայն տրանսպորտային ծառայությունների բարձր արժեքը, այլ նաև փոխադրման տևողության անկանխատեսելիությունը:

Վերոնշյալ խնդիրները կարևոր ու անհրաժեշտ են դարձնում արտաքին առևտրի լոգիստիկ հիմնախնդիրների ուսումնասիրությունը Հայաստանի համար, ինչով էլ հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը.

- Գնահատվել է ՀՀ և հիմնական առևտրային գործընկեր երկրների, այդ թվում ԵԱՏՄ, ինչպես նաև տարածաշրջանային այլ երկրների փոխադարձ առևտրի

ինտենսիվությունը, ինչի արդյունքում բացահայտվել է ՀՀ գործընկեր երկրների հետ փոխշահավետ առևտրի ներուժն ու նախանշվել դրա լիարժեք իրացման ուղիները:

- Արտահանվող ապրանքների արժեքի և բեռնափոխադրումների ծախսերի դինամիկայի ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրների լոգիստիկ շղթաների արդյունավետության բարձրացման և մրցունակության խթանման ուղիները, որի շրջանակներում հիմնավորվել է միջտարածաշրջանային լոգիստիկ կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը:
- Տնտեսաչափական մոդելների կիրառմամբ գնահատվել է լոգիստիկ արդյունավետության համաթվի և դրա բաղադրիչների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի տեմպերի վրա ու բացահայտվել առկա փոխառնչությունները:
- Գրավիտացիոն մոդելի միջոցով գնահատվել է հայ-թուրքական սահմանի բացման ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, մասնավորապես, բացահայտվել է բաց սահմանով Թուրքիայից Հայաստան ներմուծման և Հայաստանից Թուրքիա արտահանման ծավալների հնարավոր փոփոխությունները:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը հիմնավորվում է ստացված արդյունքների կիրառական բնույթով: Վերջիններս կարող են կիրառվել այս կամ այն երկրի հետ իրականացվող առևտրի շրջանակներում ապրանքների արժեքի և բեռնափոխադրումների ծախսերի դինամիկայի, և լոգիստիկ շղթաների ուսումնասիրության և կատարելագործման նպատակով: Մշակված գործիքակազմով կարելի է գնահատել և վերլուծել ՀՀ արտաքին առևտրի առկա վիճակն ու լոգիստիկ հիմնախնդիրները, ինչպես նաև իրականացնել Հայաստանում լոգիստիկայի և ենթակառուցվածքների ազդեցության գործոնային հետազոտություն՝ տնտեսաչափական մոդելների կիրառմամբ: Կատարված հետազոտությունը կհետաքրքրի այդ հիմնահարցերի վերլուծությամբ զբաղվող տնտեսագետներին, կառավարման մասնագետներին, ինչպես նաև որպես ուսումնական նյութ կարող է ծառայել գիտագործնական սեմինարների և թեմատիկ դասախոսությունների համար:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 130 աղբյուր, և 9 հավելվածից: Աշխատանքի ծավալը կազմում է 135 տպագիր էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

• Ատենախոսության առաջին՝ ***«Լոգիստիկան որպես համաշխարհային տնտեսության զարգացման առանցքային շարժիչ»*** գլխում տնտեսության բացությունը դիտարկվել է որպես միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման կարևոր միտում, քննարկվել է լոգիստիկ մրցունակության և արտաքին առևտրի փոխառնչությունների տեսամեթոդական հիմքերը: Անդրադարձ է կատարվել լոգիստիկ շղթաների միջազգային մրցունակությանը և լոգիստիկ գործունեության կարգավորման մեխանիզմներին՝ արտաքին առևտրի խթանման համատեքստում:

• Ատենախոսության երկրորդ՝ ***«Լոգիստիկայի արդի վիճակն ու հիմնախնդիրները հի արտաքին առևտրի խթանման համատեքստում»*** գլխում կատարվել է Հայաստանի միջազգային մրցունակության և լոգիստիկ իրավիճակի համեմատական վերլուծություն: Այս համատեքստում ներկայացվել է ՀՀ արտաքին առևտրի և լոգիստիկ համակարգի առկա վիճակը, ինչպես նաև իրականացվել է Հայաստանում լոգիստիկ արդյունավետության համաթվի և դրա բաղադրիչների ազդեցության գործոնային հետազոտություն՝ տնտեսաչափական մոդելների կիրառմամբ:

• Ատենախոսության երրորդ՝ ***«Լոգիստիկայի միջազգային մրցունակության բարելավման հիմնական առաջնահերթությունները՝ որպես ՀՀ արտաքին առևտրի խթանում »*** գլխում վեր են հանվել ՀՀ-ում լոգիստիկայի միջազգային մրցունակության բարձրացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները: Հեղինակը՝ գրավիտացիոն մոդելի կիրառմամբ, ներկայացրել է ՀՀ արտաքին առևտրի քանական և որակական զարգացման հեռանկարները, ինչչպես նաև առաջարկել է Հայաստանի լոգիստիկ ծայառությունների միջազգային մրցունակությանն ուղղված բարեփոխումների հիմնուղիները:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

- Հեղինակի կողմից կիրառված մոդելների վերլուծության համաձայն՝ լոգիստիկայի արդյունավետության համաթվի և դրա հինգ բաղադրիչների 1% աճը հանգեցնում է Հայաստանի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճին, որը տատանվում է 1.028%-ից 1.32% սահմաններում: Իսկ մոդել 7-ի արդյունքները, ցույց են տալիս բացասական փոխկապվածություն բեռների սահմանային անցակետերից անցնելու և մաքսազերծելու ժամկետների բաղադրիչի ու մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջև: Կապված աշխատանքի թեմայի առանձնահատկության հետ. աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակը վերլուծեր նաև լոգիստիկայի արդյունավետության համաթվի և դրա վեց բաղադրիչների կապը տրանսպորտային ծախսերի կամ բեռնափոխադրումների արժեքների, արտահանման, ներմուծման ծավալների, կամ ընդհանուր առևտրաշրջանառության, ինչպես նաև արտահանում/ ՀՆԱ, ներմուծում/ՀՆԱ ցուցանիշների հետ:
- Տրանսպորտային ենթակառուցվածքներ բաղադրիչը, ինչպես նշել է հեղինակը, արձանագրել է առավելագույն ցուցանիշ. հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երբ ենթակառուցվածքների որակը բարձրանա 1%-ով, Հայաստանի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կաճի 1.320%-ով: Անշուշտ, օդանավակայանների, երկաթուղիների, մայրուղիների և այլ տրանսպորտային ենթակառուցվածքների բարեկարգումը և որակական բարելավումը տանում է տնտեսության միջազգային մրցունակության դիրքի բարելավմանը, կրճատում փոխադրումների ծախսերն ու ժամանակը, նպաստում հուսալիության և անվտանգության բարձրացմանը՝ դրականորեն անդրադառնալով տնտեսական աճի վրա: Մյուս կողմից, ավելի քան պարզ է, որ ենթակառուցվածքների որակի բարձրացման շրջանակներում նախատեսված հսկայական ծավալների շինարարական աշխատանքները, պետական ծախսերը տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից են հանդիսանում: Այս տեսանկյունից,

կարծում ենք, առնվազն պարզաբանման կարիք ունի, թե աշխատանքում հիմնավորված **ենթակառուցվածքների որակի բարձրացման և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջև դրական փոխկապվածության մեջ ներառված է արդյո՞ք շինարարական աշխատանքների, ներդրումների և պետական ծախսերի գործոնը, թե ոչ:**

- Հեղինակը, արդյունավետ լոգիստիկ համակարգի ստեղծման ճանապարհին կարևորելով պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությունը, չի անդրադարձել ՀՀ-ում հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրման շրջանակներում ներկայացված տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված առկա ներդրումային նախագծերին, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության ներկայիս վիճակին: Մասնավորապես, համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ ՀՀ-ում 1990–2022 թթ.իրականացվել է 18 ՊՄԳ ծրագիր՝ 2.6 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումներով: ՊՄԳ ծրագրերը ՀՀ-ում իրականացվել են ենթակառուցվածքային ոլորտներում՝ էներգետիկա, երկաթգիծ, օդանավակայաններ, ջրամատակարարում, հեռահաղորդակցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողություններն էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: Տ. Միքայելյանի ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ կիրառվել է տնտեսական լավ մշակված գործիքակազմ տնտեսության հետագա բացության մակարդակը որոշելու համար:

Հեղինակը ցուցաբերել է մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին փաստում են ատենախոսությունում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել ԵԱՏՄ հետագա ընդլայնման աշխարհագրությունը որոշելիս՝ հնարավորություն տալով հաշվի առնել անդամ երկրների հնարավոր օգուտները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Տիգրան Սամվելի Միքայելյանի «Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ընդդիմախոս՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի գլխավոր մասնագետ,
տ.գ.թ.՝ Նարեկ Յուրիի Հովականյան

Նարեկ Յուրիի Հովականյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Ռիմա Սիմոնի Բաբայան